



ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ  
ՈՒՍՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2024

ԱՆԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

**Հարգելի ուսուցիչ**

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:  
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի  
անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան  
անդրադառնալ ավելի ուշ:

**Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության  
համար:**

**1** №1 ձևի անասնաբուժական վկայականը տրվում է՝ (1 միավոր)

- 1) ՀՀ-ի տարածքում փոխադրվող՝ կենդանական ծագում ունեցող կերերի (լրացակերեր, մսալյուր, ոսկրալյուր) համար:
- 2) ՀՀ-ի տարածքում փոխադրվող՝ կենդանիների, բեղմնավորված ձկնկիթի, ինկուբացիոն ձվի, սերմնահեղուկի համար:
- 3) ՀՀ-ի տարածքում փոխադրվող՝ կենդանական ծագում ունեցող մթերքի (մսի, կաթի, ձվի, մեղրի) համար:
- 4) ՀՀ-ի տարածքում փոխադրվող՝ կենդանական ծագում ունեցող հումքի (բուրդ, մորթեղեն, մազ, փետուրներ, էնդոկրիին գեղձեր, աղիքներ) համար:

**2** Անասնաբուժական գրանցման ինչպիսի՞ մատյան չկա: (1 միավոր)

- 1) կենդանիների զբոսանքի
- 2) հակահամաճարակային
- 3) համաճարակային
- 4) ոչ վարակիչ հիվանդությունների

**3** Ո՞ր կենդանիներն են խլախտով հիվանդանում: (1 միավոր)

- 1) խոզերը
- 2) խոշոր եղջերավորները
- 3) մանր եղջերավորները
- 4) ձիերը

**4** Ո՞ր տարբերակում են 2 երևույթներն էլ համապատասխանում դաբաղ հիվանդությանը և նրա հարուցիչին: (1 միավոր)

- 1) ցածր վարակելիություն, ցածր մահացություն
- 2) բարձր վարակելիություն, բարձր մահացություն
- 3) բարձր վարակելիություն, ցածր մահացություն
- 4) ցածր վարակելիություն, բարձր մահացություն

**5** Հետևյալներից ո՞րն է համարվում վարակիչ հիվանդությունների բուժման լավագույն միջոցը: (1 միավոր)

- 1) վիտամինային բուժումը
- 2) գերիմուն շիճուկի ենթամաշկային ներարկումը
- 3) ֆիզիոլոգիական լուծույթի ներերարկային ներարկումը
- 4) մեծ քանակի թորած ջուր խմեցնելը

6

Հետևյալներից, ո՞րը համաճարակային պրոցեսի զարգացման պարբերականության փուլ չէ: (1 միավոր)

- 1) հիվանդության իսպառ վերացումը
- 2) հիվանդության դեպքերի ավելացումը
- 3) հիվանդության դեպքերի զարգացման կուլմինացիոն կետը
- 4) հիվանդության դեպքերի քանակի նվազումը

7

Տրված հիվանդություններից ո՞րի հարուցիչը հողային չէ: (1 միավոր)

- 1) կոլիբակտերիոզի
- 2) սիբիրախտի
- 3) փայտացման
- 4) բոտուլիզմի

8

Հետևյալներից ո՞րն է համարվում կենդանիների վարակիչ հիվանդությունների առանձնահատուկ կանխարգելման միջոցառում: (1 միավոր)

- 1) մեկուսացումը
- 2) հատուկ եղանակով կերակրումը
- 3) պատվաստումը
- 4) որոշ ժամանակով չշահագործումը

9

Հետևյալներից ո՞րը համաճարակային օջախի տեսակ չէ: (1 միավոր)

- 1) փոփոխական
- 2) հանգչող
- 3) ստացիոնար
- 4) բնական

10

Տարբեր տեսակի ձկների համատեղ բուծման դեպքում դրանց ո՞ր առանձնահատկությունը հաշվի չի առնվում: (1 միավոր)

- 1) սեռային
- 2) սննդային
- 3) տեսակային
- 4) տարիքային

11 Ո՞րը մեղուների հիվանդություն չէ: (1 միավոր)

- 1) պարկավոր մեղվաորդը
- 2) ամերիկյան փտախտը
- 3) նոզեմատոզը
- 4) պիեմիան

12 Հետևյալներից ո՞րը հելմինթոսոլուկոպիկ մեթոդ չէ: (1 միավոր)

- 1) Քալանթարյանի
- 2) Վայդի
- 3) Ֆյուլերոնի
- 4) Դառլինգի

13 Դիսպանսերացումը՝ (1 միավոր)

- 1) հյուսվածքաբանական հետազոտություններ են:
- 2) վերքի մանրազնին հետազոտություն է:
- 3) եզրակացություն է հիվանդության ելքի մասին:
- 4) պլանային կարգով անցկացվող ախտորոշիչ, բուժկանխարգելիչ միջոցառումներ են:

14 Ի՞նչ է կոչվում բարակ աղիքների կերազանգվածի կանգը: (1 միավոր)

- 1) խոլիստազ
- 2) կոպրոստազ
- 3) լիմֆոստազ
- 4) խիմոստազ

15 Ո՞րը բրոնխոպնևմոնիային բնորոշ ախտանիշ չէ: (1 միավոր)

- 1) լորձաթաղանթների դեղնությունը
- 2) չոր կամ խոնավ հազը, խզզոցը
- 3) շնչահեղձությունը
- 4) սիրտանոթային անբավարարվածությունը

16 Հետևյալներից ո՞րին է բնորոշ ցավագին միզարտազատությունը: (1 միավոր)

- 1) նեֆրիտին
- 2) նեֆրոսկլերոզին
- 3) ուրոցիստիտին
- 4) էնդոմետրիտին

17 Ո՞ր կենդանու հոլիության միջին տևողություն է 340 օր: (1 միավոր)

- 1) ուղտի
- 2) կովի
- 3) գոմեշի
- 4) գամբիկի

18 Ո՞ր տարբերակում է ճիշտ նշված ծննդաբերության հաջորդականությունը: (1 միավոր)

1. արգանդի վզիկի բացում, 2. ընկերքային փուլ, 3. պտղի արտաքսում

- 1) 3, 2, 1
- 2) 1, 2, 3
- 3) 2, 1, 3
- 4) 1, 3, 2

19 Ինչպե՞ս են վարվում պայմանական պիտանի մսեղիքի հետ: (1 միավոր)

- 1) բաց են թողնում վաճառքի առանց սահմանափակումների
- 2) օգտահանում են
- 3) այրում են
- 4) վերամշակում են

20 Ըստ վիճակագրական տվյալների՝ հետևյալ կենդանական տեսակներից ո՞րի ցիստիցերկոզով վարակված մսեղիքից է մարդն առավել հաճախ վարակվում: (1 միավոր)

- 1) ճագարի
- 2) տավարի
- 3) խոզի
- 4) ոչխարի

21 Հետևյալներից ո՞րն ախտահանության մեթոդ չէ: (1 միավոր)

- 1) կենսաբանական
- 2) քիմիական
- 3) կարանտինացման
- 4) Ֆիզիկական

22 Հետևյալներից ո՞րն է դեղանյութերի ներմուծման պարենտերալ ուղին: (1 միավոր)

- 1) ուղիղ աղիքային
- 2) բերանային
- 3) ենթալեզվային
- 4) ենթամաշկային

23 Մննդանյութերի այն քանակությունը, որը նախատեսված է կենդանու մեկ օրվա պահանջը բավարարելու համար կոչվում է՝ (1 միավոր)

- 1) բտում
- 2) սնուցում
- 3) կենսաբանական ակտիվություն
- 4) կերակրման նորմա

24 Ինչո՞վ է պատված ոսկորի արտաքին մակերեսը: (1 միավոր)

- 1) սպունգաձև նյութով
- 2) աճառային հյուսվածքով
- 3) շարակցահյուսվածքային ամուր շապիկով
- 4) ֆիբրոզային թիթեղներով

25 Ո՞ր տարբերակում է ճիշտ նշված որոճողների կրծքային վերջույթների հետևյալ հոդերի տեղադրման հաջորդականությունը: (1 միավոր)

1. արմունկ, 2. կապ, 3. պսակ, 4. դաստակ

- 1) 4, 2, 3, 1
- 2) 1, 2, 3, 4
- 3) 2, 1, 4, 3
- 4) 1, 4, 2, 3

26 Ո՞ր հորմոնն է կարգավորում վահանազեղձի ֆունկցիան: (1 միավոր)

- 1) թիրեոտրոպ
- 2) ադրենոկորտիկոտրոպ
- 3) պրոլակտին
- 4) օքսիտոցին

27 Ի՞նչ է ռեֆլեքսը: (1 միավոր)

- 1) Նյարդային բջիջների ընդհանուր գործնությունն է:
- 2) Ընկալչական դաշտը կազմող ընկալիչների միագումարումն է:
- 3) Օրգանիզմի պատասխան ռեակցիան է գրգռիչների նկատմամբ:
- 4) Գրգռիչի ազդման պահից մինչև պատասխան ռեակցիան ընկած ժամանակն է:

28 Հետևյալներից ո՞րն է մարսողական օրգանների տեղադրման ճիշտ հաջորդականությունը: (1 միավոր)

1. բարակ աղիք, 2. ըմպան, 3. հաստ աղիք, 4. ստամոքս

- 1) 2, 4, 1, 3
- 2) 2, 4, 3, 1
- 3) 4, 2, 1, 3
- 4) 4, 1, 2, 3

29 Ո՞ր դեպքում է դրվում պատուհանավոր զիպսային կապ: (1 միավոր)

- 1) օստեոարթրոզի
- 2) բաց կոտրվածքի
- 3) սալջարդի
- 4) ոսկրահողախտի

30 Հետևյալներից, ո՞րը դեկորատիվ կենդանի չէ: (1 միավոր)

- 1) ճահճային առնետը
- 2) գերմանական մուկը
- 3) շինշիլան
- 4) ծովախոզուկը

**31** Կենդանիների հետևյալ 3 հիվանդությունների հարուցիչները *չեն* փոխանցվում մարդուն: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. սալմոնելոզի
2. սիբիրախտի
3. բրուցելոզի
4. աֆրիկյան ժանտախտի
5. տուբերկուլոզի
6. խշխշան պալարի
7. մաշկի հանգուցային բորբոքման (նոդուլար)

**32** Տրված հատկանիշներից 3-ը *չեն* վերաբերում խշխշան պալարի հարուցիչին: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. պատիճավոր
2. պարուրաձև
3. անաերոբ
4. հողային
5. մտրակավոր
6. գրամ դրական
7. սպորավոր

**33** Տրված եղանակներից 3-ով վարակիչ հիվանդություններ *չեն* կարող ախտորոշվել: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. մանրէաբանական
2. համաճարակաբանական
3. ուլտաձայնային
4. շիճուկաբանական
5. բախման
6. վիրուսաբանական
7. շոշափման



34

Տրված եղանակներից 3-ով վարակիչ հիվանդությունների հարուցիչները չեն թափանցում կենդանու օրգանիզմ: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. քրտնագեղձի
2. շնչուղիներով
3. միզուղիներով
4. սեռական
5. վերմաշկային
6. եղջրանյութի
7. բերանային

35

Տրվածներից 3-ը արու կենդանիներին ամորձատելու եղանակներ չեն: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. խարելով
2. բաց
3. արյունային
4. քիմիական
5. ճառագայթային
6. մեխանիկական
7. կենսաբանական

36

Տրվածներից 3-ը սիբիրախտով կասկածվող մսեղիքի հետ սպանդի ընթացքում վարվելու վերաբերյալ ճիշտ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. Ոչնչացնում են մսեղիքը այրման միջոցով:
2. Ուղարկում են օգտահանության:
3. Վերցվում են կենսասնմուշներ և ուղարկում են լաբորատոր հետազոտության:
4. Մսեղիքը տեղափոխում են խորը սառեցման:
5. Դադարեցնում են սպանդը:
6. Մսեղիքը ջերմամշակում են:
7. Մսեղիքը վերամշակում են կերակրի աղի միջոցով:

**37** **Տրվածներից 3-ը մաստիսների տեսակներ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. հետաճ
2. կատարային
3. ինդուրացիոն
4. թարախային
5. գանգրենային
6. ֆիբրինոզային
7. դերմատիտային

**38** **Վիժաճ պտուղները համարվում են ախտաբանական նյութ, եթե կենդանիները հիվանդանում են հետևյալ հիվանդություններից 3-ով: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. լեպտոսպիրոզ
2. բրուցելոզ
3. խշխշան պալար
4. պաստերելոզ
5. կամպիլոբակտերիոզ
6. կատաղություն
7. բոտուլիզմ

**39** **Հետևյալ վիրուսային հիվանդություններից 3-ով կարող են վարակվել հավերը: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. պաստերելոզով
2. գրիպով
3. լեյկոզով
4. սալմոնելոզով
5. կոլիբակտերիոզով
6. միկոպլազմոզով
7. մարեկով

Հետևյալներից 3-ի վնասագերծման նպատակով կիրառվում է իվերմեկտին պատրաստուկը: Նշել դրանց համարները: (3 միավոր)

1. նախակենդանիների
2. միկրոբների
3. վիրուսների
4. կլոր որդերի
5. քոսի տզերի
6. սնկերի
7. արոտային տզերի